ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ-ի 2026 թվականի ինը ամիսների պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացված միջոցառումների ոչ ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ

1/Թանգարանային արժեքների համալրման, հաշվառման, պահպանման, ուսումնասիրման ախտահանման, վերականգնման միջոցառումների իրականացում

- Հիմնական ֆոնդը համալրվել է թվով 15 ցուցանմուշով
- Թանգարանի ֆոնդային արժեքների թիվը համալրումից հետո կազնել է **6765**
- Համալրված ցուցանմուշները անձնագրավորվել, քարտագրավորվել, պիտակագրավորվել և լուսանկարահանվել են
- Մշտական ցուցադրությունը համալրել 8 ցուցանմուշով
- Թանգարանային ցուցանմուշներն ախտահանվել են 3 անգամ
- Վերականգնվել է թվով 16 ցուցանմուշ
- Կատարվել է հիմնական ֆոնդի ցուցանմուշների անվանումների ճշտում համապատասխան մասնագետների հետ
- Գիտական անձնագրերի նորացման նպատակով կատարվել է ցուցանմուշների թվով 32 լուսանկարների մշակում

2 / Գիտահավաքագրական միջոցառումների իրականացում

- իրականացվել է գործուղում թանգարանի Շիրակի մասնաճյուղ ցուցանմուշների որակի գնահատման և վնասված ցուցանմուշների վերականգնման աշխատանքներ իրականացնելու նպատակով:
- իրականացվել է գործուղում Տավուշի մարզ «Դիլիջան» ազգային պարկ՝ ֆոնդերի համալրման նպատակով նյութեր հավաքագրելու.
- իրականացվել է գործուղում «Սևան» ազգային պարկի տարածք՝ ֆոնդերի համալրման նպատակով նյութեր հավաքագրելու

3 /Հանրահռչակման և հասարակայնության հետ կապերի բաժնի միջոցառումների իրականացում

- Մշակվել և տպագրվել են ցուցասրահներում ներկայացված ցուցանմուշների գիտական բացատրագրեր թվով 15 հատ
- Մշակվել և տպագրվել են համալրվող ցուցանմուշների գիտական անվանումների թվով 15 քառալեզու պիտակներ
- Կատարվել է ցուցասրահներում ցուցադրվող ցուցանմուշների գիտական անվանումների ճշտում համապատասխան մասնագետների հետ

- Կազմակերպվել է 2 ժամանակավոր ցուցահանդես
  Թանգարանների միջազգային օր՝ «Ճանապարհորդություն գույների աշխարհ»
  «Հայաստան. կենսաբազմազանության երկիր»
- Կազմակերպվել է 5 միջոցառում՝
  Էկոլոգիական կրթության միջազգային օր
  Ջրի համաշխարհային օր
  Կենսաբազմազանության միջազգային օր
  Շրջակա միջավայրի պահպանության համաշխարհային օր
  Օզոնային շերտի պահպանության միջազգային օր
- Սպասարկվել է 16789 այցելու
- Անցկացվել է 558 էքսկուրսիա
- Կատարվել է մշտական ցուցադրությունում ներկայացվող ցուցանմուշների վերահաշվարկ
- Կատարվել է մշտական ցուցադրությունում ներկայացվող ցուցանմուշների պրոֆիլակտիկ ախտահանում՝ 3 անգամ
- Կենդանի ցուցադրությունում կատարվում են ակվարիումների մաքրման, ձկների բուժման հետ կապված աշխատանքներ

3/Շիրակի մասնաճյուղ-թանգարանի այցուներին ցուցանմուշների ներկայացում և բացատրություն

- Սպասարկվել է 383 այցելու
- Անցկացվել է 23 էքսկուրսիա
- Կազմակերպվել է 2 միջոցառում՝
  Թռչունների միջազգային օր
  Թանգարանների գիշեր
- Կատարվել է մշտական ցուցադրությունում ներկայացվող ցուցանմուշների պրոֆիլակտիկ ախտահանում՝ 2 անգամ

«Հայաստանի բնության պետական թանգարան»
ՊՈԱԿ-ի տեօրեն Լ. Գալստյան